Մարմաշեն

Մարմաշեն բնակավայրի վարչական տարածքը 1400.76 հա, բնակչությունը կազմում է 1897 մարդ: Բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 7կմ հեռավորության վրա: Ունի միջնակարգ դպրոց, մանկապարտեզ և բուժամբուլատորիա: Բնակավայրի մոտով անցնում է Գյումրի-Ամասիա ավտոխճուղին և Շիրակի ջրանցքը: Բնակավայրը գտնվում է Ախուրյան գետի ձախափնյա հովտում, մեղմաթեք հարթավայրում՝ ծովի մակարդակից 1620մ բարձրության վրա: Բնակավայրի շրջակայքում է գտնվում Մարմաշեն վանական համալիրը և նրա շրջակա երեք եկեղեցիները: Բնակավայրի անվանումը կապված է վանքի անվան հետ: Վանքի գլխավոր կառույցը կաթողիկե ս.Ստեփանոս եկեղեցին է: Միջնադարում այն եղել է կրոնական և մշակութային կենտրոն: Շրջակայքում կան հին բնակավայրի, քարայր-բնակավայրեր: Մարմաշենի մոտ 2կմ արևմուտք ժայռի վրա գտնվում է ուրարտական թագավոր Արգիշտի Ա-ի արձանագրություններից մեկը: Մոտակայքում գտնվում են նաև Մարմաշենի բերդի ավերակները: Բնակչությունը զբաղվում է հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների, պտուղների մշակությամբ, անասնապահությամբ: